

Քրեակատարողական և պրոբացիայի
համակարգում COVID-19
համավարակին
գեներազգայուն արձագանք

քաղաքականության մշակման
առաջարկություն





Funded by
the European Union



NETHERLANDS
HELSINKI
COMMITTEE



AFEW
International



CENTER
FOR LEGAL
INITIATIVES

Զրեակատարողական և պրորաֆիլայի
համակարգում COVID-19 համավարակին
գեներալգայուն
արձագանք

Երևան, 2024 թվական

«Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանք. քաղաքականության մշակման առաջարկություն» փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի «COVID-19 Համերաշխության ծրագիր 2020-2022» ծրագրի շրջանակում «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ձատագովելով բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման կարևորությունը» ծրագրի շրջանակներում:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության և Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի տեսակետները:

Փաստաթուղթը մշակել է Նարե Հովհաննիսյանը:



Բովանդակություն

Ներածություն	5
Մեթոդաբանություն	6
Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը	7
Կորոնավիրուսային հիվանդության ինամբը և բուժումը	10
Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելումը	16
Կարանտինային բաժանմունք	21
Ազատագրված անձանց փոխադրումները	22
Հոգեբանական աշխատանքների կազմակերպումը	23
Սննդի և հանձնույնների տրամադրման գործընթացը	25
Արտաքին աշխարհի հետ կապը	28
Զբոսանքի կազմակերպումը	31
Գնումների կազմակերպումը	32
Վերասոցիալականացման գործընթացի կազմակերպումը	33
Աշխատանքի կազմակերպումը	35
Խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառումը	38
Կալանքից և պատժից ազատման գործընթացը	39
Խափանման միջոցների և պատիժների կիրառման գործընթացը	42
Վիճակագրություն վարելու գործընթացը	45
Ամփոփում	48
Հիմնական գրականության ցանկ	49

Ներածություն

Հայաստանի քրեակատարողական հիմնարկներ կորոնավիրուսային հիվանդության ներթափանցման ուղիներ են եղել ազատազրկված անձանց¹ հարազատների կողմից իրականացված տեսակցությունները, ազատազրկված անձանց տեղաշարժը, առողջական վիճակով պայմանավորված առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ, ինչպես նաև քրեական գործերով պայմանավորված դատարաններ կամ այլ պետական կառույցներ տեղափոխումները: Հետևաբար կիրառված սահմանափակումները միտված են եղել ներթափանցման նշված ուղիների չեզոքացմանը: Սակայն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումներն անհամաչափ են ազդել հատկապես ազատազրկված կանանց իրավունքների ապահովման վրա՝ հանգեցնելով նրանց ներհատուկ կարիքների անտեսմանը:

Փաստաթղթի նպատակն է նպաստել քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակներին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակմանը և ներդրմանը: Այդ համատեքստում ուսումնասիրել ենք քրեակատարողական և պրոբացիայի համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմանն առնչվող միջազգային և ներպետական փաստաթղթերը՝ գենդերազգայուն լինելու տեսանկյունից, իրականացրել ենք բացահայտված հիմնախնդիրների լուծմանն ուղղված շահերի պաշտպանություն և հանրային իրազեկում:

Փաստաթղթի մշակման ընթացքում բացահայտված հիմնախնդիրների հանրայնացման և ջատագովության համար կազմակերպել ենք 4 մեդիա քննարկում և 1 ամփոփիչ կոնֆերանս, որոնք նպաստել են, որպեսզի պատասխանատու պաշտոնյաները դիրքորոշում արտահայտեն բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ և պարտավորություն ստանձնեն դրանց կարգավորմանն ուղղությամբ: Կալանավորված

¹Ազատազրկված անձինք հասկացությամբ մատնանշում ենք կալանավորված անձանց և դատապարտյալներին: Կալանավորված անձինք նրանք են, ովքեր մեղադրվում են հանցագործություն կատարելու մեջ և որոնց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Դատապարտյալները նրանք են, որոնց նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ: Անձինք ազատազրկվում, այսինքն՝ հայտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը կամ որպես պատժի տեսակ ընտրվում է ազատազրկումը՝ կարճաժամկետ ազատազրկում, ազատազրկում և ցմահ ազատազրկում:

և դատապարտված կանանց² խնդիրների շուրջ հանրության իրազեկվածությունը և զգայունությունը բարձրացնելու նպատակով պատրաստել ենք 2 տեսաֆիլմ³:

Մեթոդաբանություն

Փաստաթղթի մշակման աշխատանքները մեկնարկել ենք 2022, ամփոփել՝ 2023 թվականին: Փաստաթղթում դիտարկել ենք կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով 2020 և 2021 թվականներին կիրառված սահմանափակումները և դրանց հետևանքով ստեղծված իրավիճակը: Ուսումնասիրել ենք քրեակատարողական և պրոբացիայի համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինամֆի և բուժման վերաբերյալ ավելի քան 300 միջազգային և ներպետական փաստաթուղթ:

Հիմնախնդրի վերաբերյալ շահագրգիռ կողմերի կարծիքը և առաջարկություններն ուսումնասիրելու նպատակով խորին հարցազրույցներ ենք անցկացրել Արդարադատության նախարարության, Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության, Քրեակատարողական բժշկության կենտրոնի, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ներկայացուցիչների, կալանավորված ու ազատազրկման դատապարտված 3-ական կանանց և պրոբացիայի 6 կին շահառուի հետ:

Իրավիճակը համակողմանիորեն վերլուծելու և գնահատելու նպատակով տեղեկատվություն ստանալու վերաբերյալ 40-ից ավել գրավոր հարցումներ ենք ուղարկել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը, Պրոբացիայի ծառայությանը, Քրեակատարողական բժշկության կենտրոնին, Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոնին, Գլխավոր դատախազությանը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին:

²Փաստաթղթի մշակման ժամանակ չենք դիտարկել տնային կալանք և վարչական հսկողություն խափանման միջոցները, քանի որ դրանք Պրոբացիայի ծառայության կողմից սկսել են կիրառվել 2023 թվականի հունվարի 1-ից: Դիտարկել ենք ազատազրկում, տուգանք և հանրային աշխատանքներ պատժատեսակները:

³Մեդիա քննարկումների, ամփոփիչ կոնֆերանսի և տեսաֆիլմերի մասին տեղեկատվությունը հասանելի է Իրավական նախաձեռնությունների կենտրոնի կայքում:

Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը

Մշտադիտարկման հրապարակային տվյալների բացակայության պայմաններում դժվար է գնահատել, թե ազատագրված կանանց բժշկական օգնությունը և սպասարկումը կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ ինչպես են կազմակերպվել, ինչ խախտումներ են թույլ տրվել և ինչ քայլեր են ձեռնարկվել՝ դրանք վերացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, մեր դիտարկումները փաստում են, որ առկա օրենսդրական և ընթացակարգային խնդիրները խոչընդոտել են կանանց առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացմանը:

Ազատագրված կանանց առողջական վիճակի վատթարացման, առողջապահական ծառայությունների որակի և հասանելիության, դրանց տրամադրման հարցում հապաղումների են հանգեցրել քրեակատարողական հիմնարկի և բժշկական սպասարկման համար հատկացված տարածքների խոնավությունը, ոչ բարվոք և հակասանիտարական վիճակը, ինչպես նաև ազատագրված կանանց սպասարկող բուժանձնակազմի ծանրաբեռնվածությունը: Նշված խնդիրները կարող էին անարդյունավետ դարձնել ոչ միայն բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը, այլև ազատագրված կանանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխարգելելուն միտված ջանքերը:

Վարակիչ հիվանդությունների արդյունավետ կանխարգելման և բուժման տեսանկյունից մտահոգության տեղիք է տալիս այն, որ ազատագրված կանանց շրջանում ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և Հեպատիտ C-ի ռապիդ թեստավորումներն անցկացվում են ոչ թե քրեակատարողական հիմնարկ մուտք գործելուց անմիջապես հետո, այլ տևական ժամանակ անց: Ինչ վերաբերում է ֆյուրոգրաֆիկ հետազոտություններին, ապա դրանք ոչ թե յուրաքանչյուր կնոջ առաջնային մուտքի ժամանակ են անցկացվում, այլ՝ տարվա մեջ 2 անգամ, ինչը բավարար չէ առողջական հնարավոր խնդիրների բացահայտման և բուժման համար, քանի որ կանանց՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելու և հետազոտությունն անցկացնելու ժամկետները կարող են չհամընկնել: Բացի այդ, նշված թեստավորումների և հետազոտությունների անցկացումը պարտադիր բնույթ չի կրում, ինչը նշանակում է, որ կանայք կարող են հրաժարվել:

Պարզել ենք նաև, որ քրեակատարողական հիմնարկի պայմաններում կատարվում է ամբուլատոր բուժում և դիսպանսեր հսկողություն, ատամնաբուժական ռենտգեն և գլյուկոմետրիա: Ազատագրված կանանց նեղ մասնագիտական խորհրդատվությունները և ստացիոնար բուժումը, ինչպես նաև լաբորատոր և գործիքային մյուս հետազոտությունները կազմակերպվում են առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում: Դա խնդրահարույց է այն առումով, որ կարող է դառնալ ազատագրված կանանց վարակման և նրանց կողմից քրեակատարողական հիմնարկ կորոնավիրուսային հիվանդության վարակի ներթափանցման ու տարածման պատճառ:

Նույն մտահոգությունը վերաբերում է նաև իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաներին: Քանի որ երեխաներն իրենց կարգավիճակով ազատագրված չեն, Քրեակատարողական բժշկության կենտրոնը չունի մանկական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու լիցենզիա, համալրված չէ մանկական դեղերով և համապատասխան մասնագետով: Հետևաբար երեխաների բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են մասնագիտացված բժշկական հաստատություններում: Պարզել ենք, որ առկա չեն նաև մանկահասակ երեխաներին իրենց ազատագրված ծնողների հետ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ ուղեկցելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ: Գործընթացը կազմակերպվում է բժշկական ստորաբաժանման ղեկավարի կողմից քրեակատարողական հիմնարկի պետին ուղղված միջևորդության հիման վրա:

Առողջապահական ծառայությունների տրամադրման հարցում հապաղումներ թույլ չտալու, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության վարակման ռիսկերը նվազեցնելու տեսանկյունից կարևոր է Քրեակատարողական բժշկության կենտրոնում հեռաբժշկության համակարգի ներդրումը: Հանրային և քրեակատարողական առողջապահական համակարգերը հեռահաղորդակցության միջոցով միացնելը հնարավորություն կտա հաղթահարել ազատագրված անձանց շրջանում առողջապահական ծառայությունների հասանելիության հետ կապված խոչընդոտները՝ առանց նրանց առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ ֆիզիկապես տեղափոխելու: Համակարգի ներդրումը և արդյունավետ գործարկումն առավել քան անհրաժեշտ է ազատագրված կանանց՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկի պայմաններում նրանց համար նախատեսված առողջապահական ծառայությունների սահմանափակ ծավալը: Սակայն կորոնավիրուսային հիվանդության

կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով գործընթացը կասեցվել է, թեև այդ ուղղությամբ աշխատանքները մեկնարկվել են շատ ավելի վաղ: Ներկայումս այն գործարկման փուլում է, թեև պետք է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում հեռաբժշկության իրականացման կարգ դեռևս սահմանված չէ:

Ազատագրված կանանց առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը և Քրեակատարողական բժշկության կենտրոնին առաջարկում ենք.

- Վերանորոգման աշխատանքներ կատարել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում և բժշկական ստորաբաժանմանը հատկացված սենյակներում՝ շենքում խոնավությունը վերացնելու և սանիտարահիգիենիկ բավարար վիճակ ապահովելու համար:
- Քայլեր ձեռնարկել ազատագրված կանանց սպասարկող բուժանձնակազմի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու ուղղությամբ՝ դիտարկելով հաստիքների ավելացման հարցը:
- Ազատագրված կանանց շրջանում ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և Հեպատիտ C-ի ռապիդ թեստավորումներն անցկացնել քրեակատարողական հիմնարկ մոտեք գործելուց անմիջապես հետո: Իսկ ֆյուրոգրաֆիկ հետազոտություններն անցկացնել յուրաքանչյուր կնոջ առաջնային մոտեքի ժամանակ: Ինչպես նաև իրազեկման աշխատանքներ կատարել նշված թեստավորումների և հետազոտությունների կարևորության մասին:
- Մինչև 3 տարեկան երեխաներին իրենց ազատագրված ծնողների հետ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ ուղեկցելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր մշակել:
- Քրեակատարողական համակարգում հեռաբժշկության իրականացման կարգ մշակել:
- Քրեակատարողական առողջապահական համակարգում ապահովել հեռաբժշկության արդյունավետ գործարկումը՝ այն հավասարապես հասանելի դարձնելով ազատագրված կանանց:

Կորոնավիրուսային հիվանդության խնամքը և բուժումը

Համադրելով մեր ունեցած տեղեկությունները՝ պարզել ենք, որ քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման միջոցառումների մշակման և ներդրման ժամանակ Առողջապահության նախարարությունը համագործակցել է Արդարադատության նախարարության, Քրեակատարողական բժշկության կենտրոնի, Քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների հետ, ցուցաբերել է մեթոդագործական աջակցություն: 2020 թվականի մարտին ստեղծվել է կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և տարածման դեմ պայքարի միջգերատեսչական աշխատանքային խումբ, որտեղ Առողջապահության նախարարության համակարգի մասնագետներից բացի ընդգրկվել են մասնագետներ տարբեր գերատեսչություններից: Հիմք ընդունելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեթոդական ցուցումները՝ խմբի կողմից մշակվել են տարբեր փակ հաստատություններում, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, հայտնաբերման, մեկուսացման և բուժման կազմակերպման պլանների օրինակելի ձևերի նախագծեր: Քրեակատարողական հիմնարկների դեպքում առաջնորդվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված ժամանակավոր մեթոդական ցուցումներով, որոնք առավել ամբողջական են ներկայացրել նախատեսվող կանխարգելիչ միջոցառումները: 2020 թվականի մարտ-ապրիլ ամիսներին խմբի անդամները կազմակերպել են հանդիպումներ Արդարադատության նախարարության և Քրեակատարողական ծառայության ղեկավար անձնակազմի հետ և նրանց ծանոթացրել պլանի հիմնական դրույթներին ու աշխատանքների կազմակերպմանը:

Ներկայումս հնարավոր չէ գնահատական տալ խմբի գործունեության արդյունավետությանը հրապարակային տվյալների բացակայության պատճառով: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ Առողջապահության նախարարության կողմից նկատի չեն առնվել ազատագրված կանանց խոցելիությունը և ներհատուկ կարիքները, հետևաբար նրանց համար առանձին գործողություններ մշակելու հարցը չի դիտարկվել:

Ինչ վերաբերում է Քրեակատարողական բժշկության կենտրոնին, ապա վերջինս քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային

հիվանդության կանխարգելման և բուժման գործընթացները կազմակերպելիս առաջնորդվել է Կառավարության վերաբերելի որոշումներով և Առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով: Այսպես.

- Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման գործընթացը կազմակերպվել է Կառավարության 2020 թվականի մարտի 13-ի թիվ 298-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումներով սահմանված կարգով:
- Բժշկական սպասարկում իրականացնող տարածքների ախտահանման և ազատագրված անձանց ջերմաչափման գործընթացը կազմակերպվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված կարգով:
- Ազատագրված անձանց թեստավորումը կազմակերպվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 31-ի թիվ 336-Ա հրամանով սահմանված կարգով:
- Ազատագրված անձանց ՊՇՌ⁴ հետազոտության գործընթացը կազմակերպվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի թիվ 21-Ն և 2021 թվականի փետրվարի 15-ի թիվ 436-Ա հրամաններով սահմանված կարգով:
- Ազատագրված անձանց պատվաստումային գործընթացը կանոնակարգվել է նաև կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստանյութերի կիրառման ուղեցույցներով, որոնք հաստատվել են Առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով և տեղադրված են Առողջապահության նախարարության կայքում:
- Դրական ախտորոշում ունեցող ազատագրված անձանց բժշկական օգնությունը և սպասարկումը քրեակատարողական հիմնարկներում կազմակերպվել է Առողջապահության նախարարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 3526-Լ հրամանով սահմանված կարգով: Դրական ախտորոշում ունեցող ազատագրված անձանց հիվանդանոց տեղափոխումը և բուժումը կազմակերպվել է Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված կարգով:

Ներստորաբաժանումային վարակների կանխարգելման աշխատանքները կազմակերպելիս բժշկական ստորաբաժանումներն առաջնորդվել են Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրենի կողմից տրված՝ օգակաթիլային ճանապարհով վարակման

⁴«ՊՇՌ» հապավումը մեկնաբանվում է որպես պոլիմերազային շղթայական ռեակցիա:

կանխարգելման վերաբերյալ ցուցումով: Կանխարգելման աշխատանքները կազմակերպելիս առաջնորդվել են նաև Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրենի 2020 թվականի հունվարի 10-ի թիվ 3-Լ հրամանով, ըստ որի՝ բժշկական ստորաբաժանումներին հանձնարարվել է կիրառել հետևյալ սահմանափակումները.

- Գրիպի և սուր շնչառական վիրուսային վարակների կանխարգելման նպատակով սահմանափակել ազատագրված անձանց շփումն ակնհայտ հիվանդ այցելուների հետ, խստացնել հսկողությունը սանիտարական և հակահամաճարակային նորմերի պահպանման նկատմամբ:
- Առավելագույնս սահմանափակել առողջական ինդիկսներ ունեցող ազատագրված անձանց ոչ հրատապ և պլանային տեղափոխումը կամ ուղեգրումն առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ դրանք իրականացնելով միայն անհետաձգելի սուր պաթոլոգիաների և ազատագրված անձանց կյանքին սպառնացող վտանգի դեպքում:
- Բժշկական ստորաբաժանումներում որոշակի ժամանակահատվածով դադարեցնել ատամնաբուժական ծառայությունը և մատուցել միայն անհետաձգելի ատամնաբուժական օգնություն:

Քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և բուժման նպատակով համապատասխան հանձնարարականներ են տրվել նաև Արդարադատության նախարարի և Քրեակատարողական ծառայության պետի կողմից: Այսպես.

- Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 7-ի ցուցման հիման վրա Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրենին հանձնարարվել է բուժանձնակազմի շրջանում բարձրացնել վարակի կանխարգելմանն ուղղված քայլերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև խիստ հսկողություն սահմանել բուժանձնակազմի կողմից վարակի կանխարգելմանն ուղղված քայլերի նկատմամբ:

Քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրի շրջանակներում Քրեակատարողական ծառայության պետի կողմից Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող համապատասխան

ստորաբաժանումներին և քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է.

- Հնարավորինս սեղմ ժամկետներում սահմանել կարանտինային քրեակատարողական հիմնարկ, մասնաշենք, խցեր կամ համապատասխան այլ տարածքներ՝ առավել ռիսկային համարվող անձանց մյուսներից մեկուսացնելու և անջատ պահելու համար:
- Առանձնահատուկ և ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել խոցելի կամ ռիսկային խմբերի ազատազրկված անձանց, այդ թվում՝ թույլ իմունային համակարգ ունեցողներին, օրինակ՝ քաղցկեղով հիվանդներին, մեծահասակներին՝ 70 տարեկան և բարձր, խրոնիկ հիվանդություններ ունեցողներին և այլն:
- Նմուշառում իրականացնելու յուրաքանչյուր դեպքում աջակցել համապատասխան բուժաշխատողներին՝ կոնտակտավոր և կասկածելի դեպքերով ազատազրկված անձանցից կորոնավիրուսի նմուշառում կատարելու աշխատանքներում:
- Նմուշառում իրականացնելու յուրաքանչյուր դեպքում ապահովել նմուշառված անձանց մեկուսացումը՝ մինչև լաբորատոր տվյալների ստացումը վերջիններիս դիտարկելով որպես հիվանդ:
- Ազատազրկված անձանց, քրեակատարողական ծառայողների և աշխատակիցների շրջանում կորոնավիրուսային հիվանդության ախտանիշների հայտնաբերման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ անմիջապես զեկուցել քրեակատարողական ծառայության պետին:
- Ազատազրկված անձանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության փաստ հայտնաբերելու դեպքում հիվանդին և նրա հետ շփում ունեցած ազատազրկված մյուս անձանց անմիջապես մեկուսացնել առանձնացված կարանտինային քրեակատարողական հիմնարկում, մասնաշենքում, խցերում կամ համապատասխան այլ տարածքներում, իսկ վերջիններիս հետ շփում ունեցած քրեակատարողական ծառայողներին կամ աշխատակիցներին ինքնամեկուսացնել կամ մեկուսացնել քաղաքացիական բժշկական հաստատություններում:
- Վարակված կամ վարակի կասկածով կարանտինում մեկուսացված ազատազրկված անձանց հետ ամենօրյա շփումն իրականացնել սոցիալական հեռավորության վրա՝ տրամաբանական ողջամտության սահմաններում:
- Փոխադրում իրականացնելու յուրաքանչյուր դեպքում բժշկական հաստատություն տեղափոխման ենթակա հիվանդ կամ կոնտակտավոր անձանց փոխադրումն իրականացնել շտապ օգնության մեքենայով կամ առանձին նախատեսված մեքենայով՝

փոխադրման ժամանակ բաց պահելով մեքենայի պատուհանները:

- Քրեակատարողական ծառայության հաշվեկշռում գտնվող տրանսպորտային միջոցով հիվանդ կամ կոնտակտավոր անձանց փոխադրման ընթացքում խորիսով կամ այլ արտազատուկներով աղտոտված մակերեսները մշակել կենցաղային ախտահանող քլոր պարունակող նյութերով:
- Պարբերաբար իրականացնել քրեակատարողական հիմնարկներում հայտնաբերված կորոնավիրուսային հիվանդության դեպքերի և ձեռնարկված միջոցառումների մշտադիտարկում՝ անհրաժեշտության դեպքում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմանն ուղղված միջոցառումների նոր ռազմավարություն մշակելու նպատակով:
- «Մեղմ» արտահայտված ախտանիշներով հիվանդների, ինչպես նաև որպես կոնտակտավոր մեկուսացված անձանց առողջական վիճակի մշտադիտարկում իրականացնելու համար ըստ անհրաժեշտության սահմանել մշտադիտարկման գրավոր աշխատանքային ընթացակարգեր՝ Քրեակատարողական բժշկության կենտրոնի աշխատակիցների հետ համատեղ:

Քրեակատարողական ծառայության պետի 2022 թվականի փետրվարի 2-ի թիվ Ե40/7.1-489 ցուցման շրջանակներում սահմանվել է ազատազրկված անձանց կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստման և ՊՇՌ հետազոտության անցկացման գործընթացը: Մասնավորապես, քրեակատարողական հիմնարկների պետերին ուղղված հանձնարարականների միջոցով սահմանվել են տեսակցություններից օգտվելու համար պատվաստումը կամ ՊՇՌ հետազոտությունը հավաստող համապատասխան վկայականի ներկայացման, ազատազրկված անձանց պատվաստման և ՊՇՌ հետազոտության անցկացման, ազատազրկված անձանց այդ նպատակով ցուցակագրելու և տվյալները բուժանձնակազմին փոխանցելու պայմանները:

Քանի որ առկա չեն մշտադիտարկման հրապարակային տվյալներ, դժվար է գնահատել, թե ազատազրկված անձանց, այդ թվում՝ կանանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության խնամքի և բուժման գործընթացները կազմակերպելիս ինչ խախտումներ են թույլ տրվել և ինչ քայլեր են ձեռնարկվել՝ դրանք վերացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, մեր դիտարկումները փաստում են, որ Առողջապահության նախարարության կողմից չի դիտարկվել ազատազրկված անձանց խոցելիությունը կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ, հետևաբար նրանց կարիքներին

առաջնահերթություն չի տրվել: Օրինակ, ազատագրված անձինք կորոնավիրուսային հիվանդության թեստավորման կամ պատվաստման գործընթացներում չեն դիտարկվել որպես առաջնահերթ կամ ռիսկային խումբ: Այս համատեքստում անտեսվել են նաև ազատագրված կանանց խոցելիությունը և ներհատուկ կարիքները:

Ազատագրված կանանց խոցելիությունը և ներհատուկ կարիքներն անտեսվել են նաև Արդարադատության Նախարարի, Քրեակատարողական ծառայության պետի և Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրենի կողմից մշակված փաստաթղթերում, հետևաբար նրանց համար այլ մոտեցումներ չեն մշակվել: Միևնույն ժամանակ պարզ չէ, թե կանանց տարբեր խմբերի շրջանում կորոնավիրուսային հիվանդության բուժման և այլ գործընթացների կազմակերպման վերաբերյալ Առողջապահության Նախարարի կողմից մշակված ընթացակարգերը որքանով են նկատի առնվել և ներառվել Քրեակատարողական բժշկության կենտրոնի կողմից ձեռնարկված գործողություններում:

Բացի այդ, Արդարադատության Նախարարի, Քրեակատարողական ծառայության պետի և Քրեակատարողական բժշկության կենտրոնի տնօրենի կողմից մշակված փաստաթղթերը չեն հանրայնացվել պաշտոնական հրապարակումների միջոցով: Չեն մշակվել քրեակատարողական հիմնարկներում համավարակի պայմաններում բժշկական օգնության և սպասարկման իրականացման կարգ, ազատագրված անձանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության բուժման և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման, համավարակի պայմաններում առողջապահական ծառայությունների սահմանափակման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները:

Ազատագրված կանանց շրջանում համավարակի կանխարգելման, ինամբի և բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության Նախարարությանը, Առողջապահության Նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը և Քրեակատարողական բժշկության կենտրոնին առաջարկում ենք.

- Քրեակատարողական հիմնարկներում համավարակի կանխարգելման, հայտնաբերման, մեկուսացման և բուժման կազմակերպման պլանները մշակելիս դիտարկել ազատագրված

կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:

- Ազատագրված կանանց համավարակի կանխարգելման և բուժման գործընթացներում դիտարկել որպես առաջնահերթ ռիսկային խումբ:
- Ազգային առողջապահական համակարգում կանանց տարբեր խմբերի շրջանում համավարակի կանխարգելման և բուժման կազմակերպման նպատակով մշակված ընթացակարգերը ներառել քրեակատարողական առողջապահական համակարգի կողմից մշակված ընթացակարգերում:
- Հաշվի առնելով ազատագրված կանանց ֆինանսական խոցելիությունը՝ դիտարկել նրանց շրջանում համավարակի կանխարգելման և բուժման որոշ ծառայություններ բացառության կարգով անվճար կազմակերպելու հարցը:
- Մշակել քրեակատարողական հիմնարկներում համավարակի պայմաններում բժշկական օգնության և սպասարկման իրականացման կարգ:
- Մշակել ազատագրված անձանց շրջանում համավարակի բուժման և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման, համավարակի պայմաններում առողջապահական ծառայությունների սահմանափակման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել ազատագրված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:

Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելումը

Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման աշխատանքները կազմակերպելիս քրեակատարողական հիմնարկներն առաջնորդվել են Կառավարության 2020 թվականի մարտի 13-ի թիվ 298-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումներով, ինչպես նաև Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամաններով սահմանված դրույթներով:

2020 թվականի ապրիլի 3-ին Քրեակատարողական ծառայության կողմից մշակվել է քրեակատարողական ծառայության համակարգում

կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագիր: Ըստ այդմ, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող համապատասխան ստորաբաժանումներին և քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է.

- **Ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ազատազրկված անձանց, ինչպես նաև քրեակատարողական ծառայության համակարգի ծառայողների և աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու ուղղությամբ:** Պահպանել և կիրառել Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ազգային առողջապահական մարմինների ու պարետատան՝ կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի ուղեցույցները, կանոնները և որոշումները:
- **Քրեակատարողական հիմնարկներին տրամադրել մասնագիտական և մեթոդական աջակցություն և օժանդակություն՝ ազատազրկված անձանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխելու նպատակով կիրառված միջոցառումները բացառապես համապատասխան իրավակարգավորումների պահանջների պահպանմամբ, համաչափ և մարդկային արժանապատվության պահպանմամբ իրականացնելու վերաբերյալ:**
- **Դիտարկել համավարակով պայմանավորված զարգացումների տարբեր իրավիճակներ և դրանցից յուրաքանչյուրի համար նախապատրաստել համապատասխան արձագանքի մեխանիզմներ, օրինակ, ազատազրկված անձանց անհետաձգելի փոխադրումներ, տեղափոխություններ, մեկուսացումներ, համընդհանուր տարահանումներ և այլն:**
- **Յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին քրեակատարողական հիմնարկի ղեկավար կազմի մասնակցությամբ անցկացնել խորհրդակցություն՝ կատարված աշխատանքների արդյունքները վերլուծելու և ամփոփելու, ինչպես նաև հաջորդ օրվա անելիքները նախանշելու նպատակով:**
- **Քրեակատարողական ծառայության և հիմնարկների ծառայողներին և աշխատակիցներին պարբերաբար պարզաբանել ծառայության և աշխատանքի ավարտից հետո այլ անձանց հետ շփումները հնարավորինս սահմանափակելու, անհրաժեշտության դեպքում՝ այդ շփումներում սոցիալական պատշաճ հեռավորություն պահպանելու անհրաժեշտությունը:**
- **Ազատազրկված անձանց պարբերաբար համապարփակ**

տեղեկատվություն ներկայացնել կիրառված սահմանափակումների մասին:

- Քրեակատարողական ծառայության և հիմնարկների տարածքները պարբերաբար ախտահանել լվացող միջոցներով և ախտահանիչ նյութերով:
- Օրական կտրվածքով կազմակերպել աշխատանքի ներկայացած ծառայողների, աշխատակիցների և հիմնարկ ընդունված ազատազրկված անձանց ջերմաչափում, ձեռքերի և անձնական իրերի ախտահանում՝ բացառելով առանց այդ միջոցառումների իրականացման մոտոքը հիմնարկ և աշխատավայր:
- Օրական կտրվածքով կազմակերպել ազատազրկված անձանց ջերմաչափում, խցերի և կացարանների, ինչպես նաև անձնական իրերի ախտահանում, օրինակ, անկողնային պարագաներ և այլն:
- Օրական կտրվածքով կազմակերպել ընդհանուր օգտագործման համար նախատեսված շինությունների, տարածքների, իրերի և առարկաների, այդ թվում՝ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների, սեղանների և բանալիների ախտահանում:

Արդարադատության նախարարի և Քրեակատարողական ծառայության պետի կողմից ըստ ենթակայության 10-յակից ավել հասցեական հանձնարարականներ են տրվել քրեակատարողական համակարգում կորուսավորուսային հիվանդության դեմ պայքարում ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ: Այսպես.

- Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 7-ի ցուցման հիման վրա Քրեակատարողական ծառայության պետին հանձնարարվել է ազատազրկված անձանց և քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի շրջանում բարձրացնել վարակի կանխարգելմանն ուղղված քայլերի վերաբերյալ իրազեկվածությունը, խիստ հսկողություն սահմանել ազատազրկված անձանց և քրեակատարողական հիմնարկների աշխատակազմի կողմից վարակի կանխարգելմանն ուղղված քայլերի նկատմամբ, ինչպես նաև խիստ հսկողություն սահմանել քրեակատարողական հիմնարկներ մուտք և ելք իրականացնող անձանց նկատմամբ՝ շարունակելով ջերմաչափումների կատարումը:
- Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի թիվ 65-Ն հրամանի կատարումն ապահովելու նպատակով Քրեակատարողական ծառայության պետի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 5-Լ ցուցման հիման վրա նշանակվել են Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում

կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատվությունը:

- Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված կարգով սանիտարահամաճարակային կանոնները պահպանելու, ինչպես նաև Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 02/11./32847-2021 գրությամբ ստացված՝ Վարչապետի հանձնարարականի պահանջներն ապահովելու նպատակով Քրեակատարողական ծառայության պետի 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ Ե40/13-4157 ցուցման հիման վրա Քրեակատարողական ծառայությունում և հիմնարկներում նշանակվել են կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման միջոցառումների պատասխանատվությունը:
- Քրեակատարողական ծառայության ստորաբաժանումների ղեկավարներին և հիմնարկների պետերին Քրեակատարողական ծառայության պետի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ Ե40/7.1-5508 գրությամբ ներկայացվել են ծառայության և աշխատանքի ներկայանալիս քրեակատարողական ծառայողների և աշխատակիցների կողմից ՊՇՌ հետազոտության կամ պատվաստման վկայականի ներկայացման պայմանները:
- Քրեակատարողական ծառայության 2022 թվականի ապրիլի 29-ի թիվ Ե40/7.1-4203 գրությամբ քրեակատարողական հիմնարկների պետերը ծանուցվել են ազատազրկված անձանց տեսակցություններին և հանձնութներ ստանալուն վերաբերող սահմանափակումների վերացման մասին:

Ներկայումս դժվար է գնահատել, թե կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված գործողություններն ինչպես են կիրառվել ազատազրկված կանանց շրջանում, ինչ խախտումներ են թույլ տրվել և ինչ քայլեր են ձեռնարկվել՝ դրանք վերացնելու ուղղությամբ, քանի որ առկա չեն մշտադիտարկման վերաբերյալ հրապարակային տվյալներ:

Այնուամենայնիվ, մեր դիտարկումները փաստում են, որ քրեակատարողական հիմնարկներում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով մշակված փաստաթղթերում չեն դիտարկվել ազատազրկված կանանց խոցելիությունն ու ներհատուկ կարիքները, հետևաբար նրանց համար այլ մոտեցումներ չեն մշակվել: Բացի այդ, ազատազրկված կանանց առողջության և անձնական հիգիենայի պահպանման համար բավարար պայմաններ չեն ապահովվել, ինչը կապված է

քրեակատարողական հիմնարկի շենքային և սանիտարահիգիենիկ վիճակի հետ: Մեր դիտարկումները փաստում են, որ խցերը կամ կացարանները հարմարեցված չեն հղի կամ իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող կանանց կարիքներին, ազատագրված անչափահաս աղջիկների համար նախատեսված չէ առանձին մասնաշենք: Ինչ վերաբերում է ազատագրված օտարերկրացի կանանց, ապա վերջիններս բավարար հասանելիություն չեն ունեցել առողջապահական, հոգեբանական ու իրավաբանական ծառայություններին և վերասոցիալականացման միջոցառումներին լեզվական խոչընդոտների պատճառով: Նշված խնդիրները կարող էին բացասաբար ազդել ազատագրված կանանց ոչ միայն պահման և իրավունքների ապահովման, այլև նրանց շրջանում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների արդյունավետության վրա:

Պարզել ենք նաև, որ Արդարադատության նախարարի և Քրեակատարողական ծառայության պետի կողմից մշակված փաստաթղթերը չեն հանրայնացվել պաշտոնական հրապարակումների միջոցով: Չեն մշակվել քրեակատարողական համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները:

Ազատագրված կանանց շրջանում համավարակի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Մշակել քրեակատարողական համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել ազատագրված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:
- Քրեակատարողական հիմնարկում վերանորոգման աշխատանքներ կատարել՝ ապահովելով բավարար սանիտարահիգիենիկ վիճակ:
- Քրեակատարողական հիմնարկի խցերը կամ կացարանները հարմարեցնել հղի և իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխա ունեցող

կանանց կարիքներին:

- Ազատագրկված անչափահաս աղջիկների համար քրեակատարողական հիմնարկում առանձին մասնաշենք նախատեսել:
- Ապահովել ազատագրկված օտարերկրացի կանանց հասանելիությունն առողջապահական, հոգեբանական ու իրավաբանական ծառայություններին և վերասոցիալականացման միջոցառումներին:

Կարանտինային բաժանմունք

Քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը նախատեսում է, որ ազատագրկված անձինք քրեակատարողական հիմնարկ ընդունվելուց հետո բժշկական հետազոտություն անցնելու և հիմնարկի պայմաններին ծանոթանալու նպատակով տեղավորվում են կարանտինային բաժանմունքի՝ այդ նպատակով նախատեսված խցերում: Հիմք ընդունելով կորոնավիրուսային հիվանդության նշանների բացահայտման հնարավոր օրերի թիվը՝ Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 7-ի ցուցման հիման վրա ավելացվել է ազատագրկված անձանց կարանտինային բաժանմունքում պահելու օրերի թիվը:

Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ կանանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկն ապահովված չի եղել բավարար պայմաններով նշված գործընթացի արդյունավետ իրականացման համար: Մասնավորապես, կարանտինային խցերի թիվը չի բավարարել հիմնարկ մուտք գործած յուրաքանչյուր անձի նախատեսված ժամկետով այնտեղ պահելու համար: Բացի այդ, կանանց, այդ թվում՝ հղիներին, մինչև 3 տարեկան երեխաներին և իրենց մայրերին համավարակի ժամանակ այդ խցերում բնակեցնելը կարող էր ոչ միայն վտանգել վերջիններիս առողջությունը, այլև անհնարին դարձնել նրանց անձնական հիգիենայի ապահովումը, քանի որ այդ խցերը ոչ բարվոք և հակասանիտարական վիճակում են:

Ազատագրկված կանանց կարանտինային բաժանմունքում տեղավորումն արդյունավետ ձևով կազմակերպելու համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում

ենք.

- Նախատեսել բավարար թվով կարանտինային խցեր՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործած յուրաքանչյուր կնոջ պահանջված ժամկետով այնտեղ պահելու համար:
- Վերանորոգել կարանտինային խցերը՝ ապահովելով անհրաժեշտ սանիտարահիգիենիկ վիճակ:

Ազատագրված անձանց փոխադրումները

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող է դադարեցվել ազատագրված անձանց տեղաշարժը: Նրանք մնում են այնտեղ, որտեղ եղել են արտակարգ իրավիճակ հայտարարվելու պահին՝ մինչև հիմնարկի վարչակազմից նոր հրահանգ ստանալը: Կառավարության թիվ 298-Ն որոշմամբ նույնպես սահմանվել է, որ ազատագրված անձանց՝ քրեակատարողական հիմնարկի տարածքի սահմաններում և դրանից դուրս գտնվելը, տարածքի սահմաններում տեղաշարժվելը երկրում արտակարգ դրություն հայտարարվելու ժամանակահատվածում կարող է արգելվել: Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 7-ի ցուցման հիման վրա Քրեակատարողական ծառայության պետին հանձնարարվել է հնարավորինս բացառել ազատագրված անձանց տեղաշարժը քրեակատարողական մի հիմնարկից մեկ այլ հիմնարկ՝ նվազեցնելու համար հիմնարկ մուտք գործող անձանց թիվը և վարակի ներթափանցման ռիսկերը: Քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրի շրջանակներում նույն հանձնարարականը տրվել է քրեակատարողական հիմնարկներին: Հանձնարարվել է նաև ըստ փոխադրման անհրաժեշտության կազմակերպել քրեակատարողական ծառայության հաշվեկշռում գտնվող, ազատագրված անձանց փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների ախտահանում՝ նախքան փոխադրում իրականացնելը:

Մեր դիտարկումները փաստում են, որ ազատագրված անձանց փոխադրումների կազմակերպման հիմնական խնդիրը կապված է եղել օրենսդրական բացի հետ: Մասնավորապես, 2020 թվականի կեսերից

ոստիկանությունը հրաժարվել է դատապարտյալներին փոխադրել դատարաններ և վարութային գործողությունների իրականացման այլ վայրեր՝ պատճառաբանելով, որ դա դուրս է իր լիազորությունների շրջանակից: Նման լիազորություն վերապահված չէր նաև Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող ուղեկցումների բաժնին: Խնդիրը կարգավորվել է 2023 թվականին: Ներկայումս դժվար է գնահատել, թե նշված խնդիրն ինչ հետևանքներ է ունեցել ազատագրված կանանց շրջանում: Սակայն ակնհայտ է, որ նրանց խոցելիությունն անտեսվել է, քանի որ չի դիտարկվել համավարակի ժամանակ նշված գործողություններին կանանց մասնակցությունը հեռավար ապահովելու հարցը:

Ազատագրված կանանց շրջանում համավարակի տարածման ռիսկերը նվազեցնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- *Վարութային և քրեական գործով պայմանավորված մյուս գործողություններին ազատագրված կանանց հեռավար մասնակցության հնարավորություն ստեղծել:*

Հոգեբանական աշխատանքների կազմակերպումը

Ազատագրված անձանց հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքները կազմակերպվում են Արդարադատության նախարարի թիվ 279-Ն հրամանով սահմանված կարգով: Քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրի շրջանակներում քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է ազատագրված անձանց պարբերաբար լրացուցիչ հոգեբանական աջակցություն տրամադրել: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ գործնականում սահմանափակվել են ազատագրված անձանց հետ քրեակատարողական հիմնարկների հոգեբանների շփումները, իսկ ընդունելությունները կազմակերպվել են միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Բացի այդ, հոգեբանների համար համավարակի պայմաններում ճգնաժամային աջակցության և խորհրդատվության տրամադրման ուղղությամբ վերապատրաստման

դասընթացներ չեն կազմակերպվել, այլ տեղեկատվություն է տրամադրվել համավարակին վերաբերելի և գործնականում կիրառելի կարգավորումների մասին:

Այս առումով առավել անբարենպաստ վիճակում են հայտնվել ազատագրկված կանայք: Մեր դիտարկումները փաստում են, որ ազատագրկման բացասական հետևանքներին ավելացել են համավարակի կանխարգելմամբ պայմանավորված սահմանափակումները, որոնք կրկնակի կերպով են վատթարացրել կանանց հոգեբանական վիճակը: Այնինչ նրանց հոգեբանական վիճակի բարելավման և հոգեկան առողջության վերականգնման ուղղությամբ հասցեական ծրագրեր չեն մշակվել: Նույն մտահոգությունը վերաբերում է նաև իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաներին: Պարզել ենք, որ նրանց հետ հոգեբանական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ համապատասխան կարգավորումներ նախատեսված չեն, բացի այդ, քրեակատարողական հիմնարկն ապահովված չէ նեղ մասնագիտացում ունեցող հոգեբան-մասնագետով:

Ազատագրկված կանանց հոգեբանական վիճակը բարելավելու և հոգեկան առողջությունը վերականգնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- *Հոգեբանների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպել՝ ազատագրկված կանանց համավարակի ժամանակ ճգնաժամային աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու նպատակով:*
- *Ազատագրկված կանանց հոգեբանական վիճակի բարելավման և հոգեկան առողջության վերականգնման ուղղությամբ հասցեական ծրագրեր մշակել համավարակի ժամանակ:*
- *Իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ կատարելու նպատակով համապատասխան կարգավորումներ նախատեսել:*
- *Քրեակատարողական հիմնարկն ապահովել երեխաների հետ աշխատող նեղ մասնագիտացում ունեցող հոգեբան-մասնագետով:*

Սննդի և հանձնութների տրամադրման գործընթացը

Ազատագրված անձանց սնունդը 2019 թվականից տրամադրվում է մասնավոր ընկերության կողմից: Համադրելով մեր ունեցած տեղեկությունները՝ պարզել ենք, որ խցային պայմաններում պահվող կանայք դժգոհություններ են ունեցել սննդի որակից: Սակայն բավարար միջոցներ չեն ձեռնարկվել համավարակի ժամանակ նրանց առողջության պահպանման և բավարար սնունդ ստանալու իրավունքի արդյունավետ իրացման, ինչպես նաև նրանց իրավունքների հնարավոր խախտումները սննդի ապահովման գործընթացում բացահայտելու ուղղությամբ: Քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրում քրեակատարողական հիմնարկներին ուղղված միակ հանձնարարությունը վերաբերել է ազատագրված անձանց սննդի պատրաստման և տրամադրման աշխատանքներում ներգրավված անձանց ձեռքերի և անձնական իրերի ախտահանման կազմակերպմանը:

Մեր դիտարկումները փաստում են, որ Արդարադատության նախարարության կամ Քրեակատարողական ծառայության կողմից չի կատարվել մասնավոր ընկերության կողմից մատակարարվող սննդի որակի և կալորիականության փորձաքննություն: Նմանատիպ փորձաքննություն կանանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում նախաձեռնել է Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը, սակայն՝ 2023 թվականին: Ավելին, մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման և մատակարարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական կարգավորումներ կամ ընթացակարգեր նախատեսված չեն:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել ազատագրված անձանց դրամական փոխանցումներ, ծանրոցներ, հանձնութներ և փաթեթներ ուղարկելու և ստանալու իրավունքը: Թեև ներքին կանոնակարգով նախատեսված է, սակայն դրամական փոխանցումներ ստանալու իրավունքը գործնականում չի սահմանափակվել: Ինչ վերաբերում է հանձնութներին, ապա Կառավարության

համապատասխան որոշումներով նախ արգելվել է դրանց ընդունումը, ապա ազատագրված անձանց թույլատրվել է 1 անձի կողմից շաբաթական 1 անգամ 1 հանձնուբ ստանալ: Նմանատիպ սահմանափակում նախատեսվել է նաև քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրով: Ըստ այդմ, քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է մինչև սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերացումը սահմանափակել ազատագրված անձանց հանձնուբների ընդունումը:

Մեր դիտարկումները փաստում են, որ առողջական խնդիրներ ունեցող ազատագրված անձանց և իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաներին կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ չի տրամադրվել համապատասխանաբար դիետիկ և մանկական սնունդ, ինչը մտահոգիչ է նրանց սննդառության ապահովման և առողջության պահպանման տեսանկյունից: Մինչև 3 տարեկան երեխաներին մանկական սննդով ապահովելու հարցը գործնականում կարգավորվել է 2022 թվականից: Իսկ ազատագրված անձանց դիետիկ սննդով ապահովելու հարցն օրենսդրական մակարդակում կարգավորվել է 2023 թվականից, երբ Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանվել են դիետիկ սննդի չափաբաժինները և դիետիկ սննդով ապահովման կարիք առաջացնող հիվանդությունների ցանկը:

Ստացվում է, որ այն անձինք, ովքեր քրեակատարողական հիմնարկների տրամադրած սննդի որակի կամ առողջական խնդիրների պատճառով նախապատվությունը տվել են հանձնուբների միջոցով փոխանցվող սննդին, կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով խոցելի վիճակում են հայտնվել: Նույն մտահոգությունը վերաբերում է նաև ազատագրված կանանց և իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաներին, ովքեր սննդից բացի դժվարություններ են ունեցել նաև անձնական հիգիենայի պարագաների և առաջին բժշկական օգնության համար նախատեսված մանկական դեղամիջոցների ձեռքբերման հարցում:

Մեր դիտարկումները փաստում են նաև, որ քրեակատարողական հիմնարկի ստեղծած զբաղվածության միջոցները չեն բավարարել, որպեսզի ազատագրված կանայք սննդի, անձնական հիգիենայի

պարագաների և մանկական դեղամիջոցների գնման համար անհրաժեշտ ծախսն ինքնուրույն հոգան: Դրանք հանձնութի միջոցով ստանալը նույնպես խնդրահարույց էր, քանի որ հանձնութների ստացումը տևական ժամանակ արգելվել էր: Բացի այդ, կարող էր հավելյալ ծախս ենթադրել ազատագրված կանանց ընտանիքների և հարազատների համար, ովքեր ստեղծված իրավիճակի պատճառով զրկվել են աշխատանքից և ի վիճակի չեն եղել աջակցել այդ հարցում: Ազատագրված կանանց համար անձնական հիգիենայի ապահովման տեսանկյունից խնդիրներ են առաջացրել մի շարք այլ հարցեր ևս՝ կապված քրեակատարողական հիմնարկում կանոնավոր տաք ջրի հասանելիության, լվացքի մեքենաների ոչ բավարար քանակի հետ և այլն:

Սակայն ազատագրված կանանց խոցելիությունը և ներհատուկ կարիքները նկատի չեն առնվել, հետևաբար չի դիտարկվել նրանց տրամադրվող սննդի չափաբաժինների ու կալորիականության և անձնական հիգիենայի պարագաների չափաբաժինների վերանայման և բացառության կարգով ավելացման հարցը:

Ազատագրված կանանց առողջության պահպանման, անձնական հիգիենայի ապահովման, ինչպես նաև բավարար սնունդ ստանալու իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Ազատագրված կանանց անձնական հիգիենայի ապահովման նպատակով քրեակատարողական հիմնարկն ապահովել կանոնավոր տաք ջրով և լվացքի մեքենաների բավարար քանակով:
- Դիտարկել ազատագրված կանանց տրամադրվող սննդի չափաբաժիններն ու կալորիականությունը և անձնական հիգիենայի պարագաների չափաբաժինները վերանայելու և համավարակի ժամանակ բացառության կարգով ավելացնելու հարցը:
- Ազատագրված անձանց մասնավոր ընկերության կողմից մատակարարվող սննդի որակի և կալորիականության փորձաքննության անցկացման ընթացակարգեր ստեղծել: Մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման և մատակարարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսել: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց՝ բավարար սնունդ ստանալու իրավունքի արդյունավետ իրացմանը:

Արտաքին աշխարհի հետ կապը

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ ազատազրկված անձանց նամակագրության և տեսակցություններ ունենալու իրավունքը հիմնարկներում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել: Սակայն պարզել ենք, որ ազատազրկված անձանց նամակագրությունը գործնականում չի սահմանափակվել: Ինչ վերաբերում է կարճատև և երկարատև տեսակցություններին, ապա դրանք Կառավարության համապատասխան որոշումներով սահմանված կարգով կամ արգելվել են, կամ որոշակի սահմանափակումներով են տրամադրվել, կամ դրանց տրամադրման համար պատվաստման կամ ՊՇՌ հետազոտության վկայականի ներկայացման պահանջ է սահմանվել: Այդ ուղղությամբ համապատասխան գործողություն է նախատեսվել նաև քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրում: Ըստ այդմ, քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է մինչև սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերացումը սահմանափակել ազատազրկված անձանց կարճատև և երկարատև տեսակցությունները:

Մեր դիտարկումները փաստում են, որ տեսակցությունների տրամադրման ուղղությամբ մշակված ընթացակարգերը չեն ամփոփվել մեկ միասնական փաստաթղթում: Ավելին, ազատազրկված կանանց ներհատուկ կարիքները նկատի չեն առնվել, հետևաբար նրանց համար այլ մոտեցումներ չեն մշակվել: Օրինակ, ՊՇՌ հետազոտությունն անվճար հիմունքներով կատարվել է միայն բժշկական ցուցման հիման վրա: Այն դեպքում, երբ ՊՇՌ հետազոտության վկայականը ներկայացնելն անհրաժեշտ է եղել տեսակցություն տրամադրելու համար, ազատազրկված անձինք հետազոտության համար վճարել են իրենց միջոցների հաշվին: Ազատազրկված կանանց և նրանց հարազատների դեպքում գործել է նույն մոտեցումը: Ճիշտ է, ՊՇՌ հետազոտության վկայականի ներկայացման անհնարինության դեպքում նրանք կարող էին ներկայացնել պատվաստման վկայական, սակայն կարծում ենք, որ հաշվի առնելով ազատազրկված կանանց ֆինանսական խոցելիությունը՝ անհրաժեշտ էր անվճար հիմունքներով ՊՇՌ հետազոտություն անցկացնելու հնարավորություն նախատեսել:

այն դեպքերի համար, երբ նրանք պատվաստվելու ցանկություն չէին հայտնի:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել նաև ազատագրված անձանց՝ հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու իրավունքը, սակայն գործնականում այն չի սահմանափակվել: Ավելին, հաշվի առնելով արտաքին աշխարհի հետ կապի կարևորությունը՝ քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրի շրջանակներում քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել է ազատագրված անձանց համար հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հավելյալ հնարավորություններ ստեղծել: Ըստ այդմ, ավելացվել են հեռախոսազանգերի և տեսազանգերի քանակը և տևողությունը, տեսազանգից օգտվելու հնարավորություն է ընձեռվել ազատագրված բոլոր անձանց: Նրանց մինչև 10 րոպե տևողությամբ 1 լրացուցիչ տեսազանգ ունենալու հնարավորություն է տրվել: Բացի այդ, ազատագրված անձանց ցանկությամբ կարճատև տեսակցությունները փոխարինվել են տեսազանգով:

Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ հեռախոսակապի և տեսակապի տրամադրման ուղղությամբ մշակված ընթացակարգերը չեն ամփոփվել մեկ միասնական փաստաթղթում: Ավելին, չի մշակվել համավարակի ժամանակ հեռախոսակապի և տեսակապի տրամադրման կարգ: Պարզել ենք նաև, որ չեն վերանայվել կալանք պատժատեսակ կրող, ինչպես նաև առանձնապես ծանր հանցագործությունների համար ազատագրվման դատապարտված անձանց տրամադրվող տեսակցությունների քանակի և տևողության հետ կապված հարցերը: Բանն այն է, որ նրանց համար օրենսդրությունը տեսակցություններ ունենալու սուղ հնարավորություն է նախատեսում, ինչի պատճառով նրանք կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ տեսազանգից օգտվելու սուղ հնարավորություն են ունեցել այն դեպքում, երբ կարճատև տեսակցությունները փոխարինվել են տեսազանգով: Դա կարող էր առավել անբարենպաստ պայմաններ ստեղծել կանանց համար:

Նույն մտահոգությունը վերաբերում է նաև ազատագրված օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձանց: Նրանք հեռախոսակապից և տեսազանգից օգտվում են իրենց նախընտրած

աշխատանքային ժամին՝ Հայաստանի ժամային գոտուն համապատասխան: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ Հայաստանի և իրենց բաղաբացիության երկրի՝ տարբեր ժամային գոտիներում լինելը դժվարացրել է տեսազանգի միջոցով իրենց ազգականների հետ կապ հաստատելու գործընթացը՝ առավել անբարենպաստ պայմաններ ստեղծելով հատկապես կանանց համար: Մինչդեռ վերջիններիս խոցելիությունը նկատի չի առնվել և նրանց համար այլ ընթացակարգ չի մշակվել:

Մեր դիտարկումները փաստում են նաև, որ ազատագրկված կանանց՝ հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու իրավունքի արդյունավետ իրացմանը խոչընդոտել են ընթացակարգային մի շարք խնդիրներ: Օրինակ, հեռախոսակապից օգտվելուն խոչընդոտել են հեռախոսաքարտերի թանկ սակագները: Պարզել ենք, որ քրեակատարողական հիմնարկի ստեղծած զբաղվածության միջոցները չեն բավարարել, որպեսզի ազատագրկված կանայք հեռախոսաքարտի համար անհրաժեշտ ծախսն ինքնուրույն հոգան: Իսկ հանձնուքի միջոցով ստանալը հնարավոր չի եղել, քանի որ հանձնուքների ստացումը տևական ժամանակ արգելվել է: Բացի այդ, կարող էր հավելյալ ծախս ենթադրել իրենց ընտանիքների և հարազատների համար, ովքեր ստեղծված իրավիճակի պատճառով զրկվել են աշխատանքից և ի վիճակի չեն եղել աջակցել այդ հարցում: Ինչ վերաբերում է տեսակապին, ապա քրեակատարողական հիմնարկում այդ նպատակով առկա է 1 համակարգիչ, ինչը, մեր կարծիքով, բավարար չէ, որպեսզի ազատագրկված յուրաքանչյուր կին ցանկության դեպքում օգտվի տեսազանգից: Այնինչ ազատագրկված կանանց խոցելիությունը նկատի չի առնվել և նրանց համար բացառություններ չեն նախատեսվել: Մասնավորապես, չի դիտարկվել նրանց անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու և տեսակապից օգտվելու համար նախատեսված համակարգչի թիվն ավելացնելու հարցը:

Արտաքին աշխարհի հետ ազատագրկված կանանց կապն արդյունավետ ձևով ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Ազատագրկված օտարերկրացի կանանց համար մշակել համավարակի ժամանակ տեսազանգից և հեռախոսազանգից օգտվելու առավել ճկուն ընթացակարգ:
- Դիտարկել ազատագրկված կանանց համավարակի ժամանակ անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու հարցը:
- Դիտարկել քրեակատարողական հիմնարկում տեսակապից

օգտվելու համար նախատեսված համակարգչի թիվն ավելացնելու հարցը:

- Ազատագրված անձանց համավարակի ժամանակ տեսակցությունների, հեռախոսազանգի և տեսազանգի տրամադրման ուղղությամբ մշակված ընթացակարգերը ամփոփել մեկ միասնական փաստաթղթում: Մշակել ազատագրված անձանց համավարակի ժամանակ հեռախոսակապի և տեսակապի տրամադրման կարգ: Ազատագրված բոլոր անձանց համար համավարակի ժամանակ հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հավասար պայմաններ ստեղծել: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել համավարակի ժամանակ նրանց՝ արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի արդյունավետ իրացմանը:

Զբոսանքի կազմակերպումը

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ ազատագրված անձանց զբոսանքի իրավունքը հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել: Կառավարության թիվ 298-Ն որոշմամբ նույնպես սահմանվել է, որ ազատագրված անձանց զբոսանքը երկրում արտակարգ դրություն հայտարարվելու ժամանակահատվածում կարող է արգելվել: Սակայն գործնականում այն չի սահմանափակվել կամ արգելվել, այլ տրամադրվել է՝ պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը:

Մեր դիտարկումները փաստում են, որ զբոսանքի տրամադրման հարցում ոչ միանման օրենսդրական մոտեցման պատճառով առավել անբարենպաստ վիճակում են հայտնվել խցային պայմաններում պատիժ կրող կանայք: Նրանք օգտվել են օրական մինչև 1 ժամ տևողությամբ զբոսանքից այն դեպքում, երբ խցային պայմաններում պահվող կալանավորված կանանց տրամադրվել է օրական 2 ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանք: Սակայն կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ բացառություն չի նախատեսվել խցային պայմաններում պատիժ կրող դատապարտյալ կանանց զբոսանքի տրամադրման հարցում:

Մեր մյուս դիտարկումը վերաբերում է զբոսանքի իրավունքի իրացման համար մեկուսարանի մասնաշենքում ոչ բավարար պայմաններին, ինչը կապված է այդ մասնաշենքում պահվող կանանց թվի համեմատությամբ զբոսախցերի ոչ բավարար քանակի, դրանց ոչ բարեկարգ և հակասանիտարական վիճակում լինելու, ինչպես նաև իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված զբոսաբակերում նրանց տարիքային զարգացմանը համապատասխանող խաղերի և ժամանցի այլ միջոցների, ֆիզիկական վարժություններով զբաղվելու հարմարանքների բացակայության հետ:

Ազատագրված կանանց զբոսանքի արդյունավետ կազմակերպման համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- *Համավարակի ժամանակ զբոսանքի տրամադրման հարցում բացառության կարգով միանման օրենսդրական ընթացակարգեր նախատեսել ազատագրված բոլոր կանանց համար:*
- *Մեկուսարանի մասնաշենքում ավելացնել զբոսախցերի քանակը:*
- *Մեկուսարանի մասնաշենքի առկա զբոսախցերը վերանորոգել՝ ապահովելով բավարար սանիտարահիգիենիկ վիճակ: Այնտեղ ֆիզիկական վարժություններով զբաղվելու հարմարանքներ նախատեսել:*
- *Իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված զբոսաբակերը համալրել երեխաների տարիքային զարգացմանը համապատասխանող խաղերով և ժամանցի այլ միջոցներով:*

Գնումների կազմակերպումը

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել հիմնարկների խանութից, կրպակից կամ վարչակազմի միջոցով լրացուցիչ սնունդ, առաջին անհրաժեշտության և այլ առարկաներ ձեռք բերելու իրավունքը: Սակայն գործնականում այն չի սահմանափակվել, այլ կազմակերպվել է՝ պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը:

Մեր կարծիքով այս դեպքում խնդիրն այն է, որ չի դիտարկվել կրպակից գնվող ապրանքների սակագների վերանայման հարցը, ինչը կարող էր գնումներ կատարելու նպաստավոր պայմաններ ստեղծել ազատագրված կանանց համար: Չի դիտարկվել նաև կրպակից գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդնելու հարցը, ինչը կարևոր էր քրեակատարողական հիմնարկ կորոնավիրուսային հիվանդության ներթափանցումը կանխելու տեսանկյունից:

Կրպակից կատարվող գնումների գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- *Դիտարկել կրպակից գնվող ապրանքների սակագների վերանայման հարցը: Դիտարկել կրպակից գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդնելու հարցը: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց՝ գնումներ կատարելու իրավունքի արդյունավետ իրացմանը:*

Վերասոցիալականացման գործընթացի կազմակերպումը

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել ազատագրված անձանց կրթություն ստանալու իրավունքը և նրանց մասնակցությունը կրոնական ծեսերին, սակայն Կառավարության համապատասխան որոշումներով նման սահմանափակումներ չեն նախատեսվել: Սահմանափակումներ նախատեսվել են քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրով: Ըստ այդմ, Քրեակատարողական ծառայության պետի կողմից քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է մինչև սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերացումը սահմանափակել ազատագրված անձանց կրթական, լուսավորչական, մշակութային, մարզական, կրոնական և մյուս միջոցառումները և ծրագրերը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միջոցառումների և ծրագրերի տևական դադարը կարող է բացասաբար

անդրադառնալ ազատագրկված անձանց վերասոցիալականացման գործընթացի վրա, կարճ ժամանակ անց դրանք վերսկսվել են հեռավար եղանակով, իսկ դեմ առ դեմ իրականացվելիս պահպանվել են հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը: Բարձրագույն կրթությունն ստացող դատապարտյալների ուսումը կազմակերպվել է հեռակա (հեռավար) եղանակով:

Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ ազատագրկված կանանց ներհատուկ կարիքները նկատի չեն առնվել այդ սահմանափակումները մշակելիս, հետևաբար նրանց համար այլ ընթացակարգեր չեն նախատեսվել: Օրինակ, չի դիտարկվել այդ ծրագրերին կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց հեռավար մասնակցությունը, ինչը կարող էր մեղմել սահմանափակումների բացասական հետևանքները նրանց շրջանում: Չի դիտարկվել նաև ինքնագործ միավորումների անդամ հանդիսացող դատապարտյալներին կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման վերաբերյալ իրազեկման կամ տեղեկատվության տարածման գործընթացներում ներգրավելու հարցը:

Բացի այդ, չի մշակվել քրեակատարողական հիմնարկներում համավարակի ժամանակ կրթական ծրագրերի և վերասոցիալականացման միջոցառումների իրականացման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները: Առկա չէ նաև քրեակատարողական հիմնարկներում հեռակա (հեռավար) կրթության իրականացման կարգ:

Ազատագրկված կանանց վերասոցիալականացման գործընթացը համավարակի ժամանակ արդյունավետ ձևով իրականացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Մշակել քրեակատարողական հիմնարկներում համավարակի ժամանակ կրթական ծրագրերի և վերասոցիալականացման միջոցառումների իրականացման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել ազատագրկված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:

- Դիտարկել կրթական ծրագրերին և վերասոցիալականացման միջոցառումներին կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց մասնակցության հարցը:
- Դիտարկել ինքնագործ միավորումների անդամ հանդիսացող դատապարտյալներին համավարակի վերաբերյալ իրազեկման կամ տեղեկատվության տարածման գործընթացներում ներգրավելու հարցը: Մշակել քրեակատարողական հիմնարկներում հեռակա (հեռավար) կրթության իրականացման կարգ: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը:

Աշխատանքի կազմակերպումը

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել ազատագրված անձանց աշխատանքով զբաղվելու իրավունքը, սակայն Կառավարության համապատասխան որոշումներով, ինչպես նաև քրեակատարողական ծառայության համակարգում կորուսավորության հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրով նման սահմանափակումներ չեն նախատեսվել: Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում վարձատրվող և չվարձատրվող հիմունքներով ներգրավված անձանց, այդ թվում՝ կանանց աշխատանքային գործունեությունը կազմակերպվել է ամենօրյա կտրվածքով՝ պահպանելով հակահամաճարակային կանխարգելիչ նորմերը: Այլ գործատուների մոտ աշխատող դատապարտյալների աշխատանքային գործունեությունը կազմակերպվել է հեռավար եղանակով: Փաստորեն, թեև ազատագրված անձանց աշխատանքային գործունեությունը չի սահմանափակվել, սակայն կանանց համար այլ մոտեցումներ չեն մշակվել: Օրինակ, չի դիտարկվել կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց համար աշխատանքային կամ զբաղվածության այլ միջոցներ ստեղծելու և այդպիսով նրանց շրջանում սահմանափակումների բացասական հետևանքները մեղմելու հարցը:

Ինչ վերաբերում է այլ գործատուների մոտ աշխատող այն դատապարտյալներին, ովքեր կարող են քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս գալ, ապա կորուսավորության հիվանդության

տարածման սկզբնական շրջանում նրանք աշխատանքի չեն հաճախել, ինչը պայմանավորված էր արտակարգ դրության պայմաններում գործող սահմանափակումներով, այնուհետև նրանց տրամադրվել են կարճաժամկետ մեկնումներ: Կարճաժամկետ մեկնումից հրաժարվելու դեպքում դատապարտյալները քրեակատարողական հիմնարկներից են հաճախել աշխատանքի: Ելքի և մուտքի սահմանափակումների պատճառով Նշված դատապարտյալների, այդ թվում՝ կանանց շրջանում աշխատանքից հեռացվելու դեպքեր չեն արձանագրվել:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է, որ հիմնարկներում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող է սահմանափակվել ազատագրկված անձանց կարճաժամկետ մեկնումների և առանց պահախմբի կամ ուղեկցորդման քրեակատարողական հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու իրավունքը: Կառավարության թիվ 298-Ն որոշմամբ ևս նախատեսվել է, որ քրեակատարողական հիմնարկներում կարող են սահմանափակվել հիմնարկի տարածքից դուրս գտնվելը, այդ թվում՝ կարճաժամկետ մեկնելը: Ըստ այդմ, քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների ծրագրի շրջանակներում Քրեակատարողական ծառայության պետի կողմից քրեակատարողական հիմնարկների համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարվել է մինչև սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերացումը սահմանափակել ազատագրկված անձանց կարճաժամկետ մեկնումները: Նշվածից բխում է, որ գործնականում կարող էր հակասական իրավիճակ առաջանալ: Բանն այն է, որ քրեակատարողական հիմնարկների տարածքից դուրս՝ այլ գործատուների մոտ աշխատող դատապարտյալների աշխատանքային գործունեությունը չի սահմանափակվել, սակայն կարճաժամկետ մեկնումների սահմանափակումը կարող էր հանգեցնել հիմնարկների տարածքից դուրս գալու և աշխատանքի հաճախելու անհնարինության: Հակասական իրավիճակը կարող էր կապված լինել նաև կարճաժամկետ մեկնումների՝ օրենսդրությամբ հասանելի թվաքանակը սպառելու հետ: Այնինչ ազատագրկված անձանց տրամադրվող կարճաժամկետ մեկնումների քանակի կամ տևողության հետ կապված հարցերը կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակահատվածում չեն վերանայվել:

Ներկայումս դժվար է գնահատական տալ, թե կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված

սահմանափակումներն ազատագրկված կանանց աշխատանքային գործունեության կազմակերպման ընթացքում ինչ խախտումների տեղիք են տվել և ինչ քայլեր են ձեռնարկվել՝ դրանք վերացնելու ուղղությամբ, քանի որ առկա չեն մշտադիտարկման հրապարակային տվյալներ: Այնուամենայնիվ, մեր դիտարկումները փաստում են, որ քրեակատարողական հիմնարկներում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն չի իրականացվել: Բացի այդ, չի մշակվել քրեակատարողական հիմնարկներում համավարակի ժամանակ աշխատանքային գործունեության կազմակերպման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների, այդ թվում՝ գործատուների գործառույթները: Առկա չէ նաև ազատագրկված անձանց աշխատանքային գործունեության հեռավար կազմակերպման կարգ:

Ազատագրկված կանանց աշխատանքային գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Մշակել քրեակատարողական հիմնարկներում համավարակի ժամանակ աշխատանքային գործունեության կազմակերպման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների, այդ թվում՝ գործատուների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել ազատագրկված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:
- Դիտարկել կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց համար աշխատանքային կամ զբաղվածության այլ միջոցներ ստեղծելու հարցը:
- Վերանայել ազատագրկված անձանց տրամադրվող կարճաժամկետ մեկնումների քանակի կամ տևողության հետ կապված հարցերը: Քրեակատարողական հիմնարկներում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացակարգ նախատեսել: Մշակել ազատագրկված անձանց աշխատանքային գործունեության հեռավար կազմակերպման կարգ: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրկված կանանց համար կարևոր է այնքանով,

որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց՝ աշխատանքի իրավունքի արդյունավետ իրացմանը:

Խրախուսանքի միջոցների և կարգապահական տույժերի կիրառումը

Մեր դիտարկումները փաստում են, որ ազատագրված անձանց խրախուսանք տրամադրելու վերաբերյալ օրենսդրությունը կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակահատվածում չի վերանայվել: Այնինչ կարծում ենք, որ գործնականում կարող էր դժվարություն առաջանալ խրախուսանքի որոշ միջոցների կիրառման հարցում: Օրինակ, տեսակցությունների տրամադրումը կամ հանձնույթների ստացումը որոշակի ժամանակահատվածով արգելվել կամ սահմանափակվել է, հետևաբար լրացուցիչ տեսակցության կամ հանձնույթի տրամադրումը որպես խրախուսանքի միջոց հնարավոր չէր կիրառել:

Նույնը վերաբերում է նաև կարգապահական տույժերին: Գիշտ է, ազատագրված անձանց կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումները խախտելու հիմքով կարգապահական տույժի ենթարկելու դեպքեր չեն արձանագրվել: Սակայն այդ սահմանափակումները կարող էին կարգապահական այլ խախտումներ կատարելու պատճառ դառնալ: Հետևաբար անհրաժեշտ էր միջոցներ ձեռնարկել առավել խիստ կարգապահական տույժի միջոցները կիրառելուց ձեռնպահ մնալու կամ դրանց կիրառման ժամկետները հետաձգելու ուղղությամբ:

Բացի այդ, ազատագրված անձանց պատժախցում կարող է արգելվել հեռախոսակապից օգտվելը, ինչը կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների ժամանակ արտաքին աշխարհի հետ կապի ապահովման միակ միջոցն էր: Դրանից զրկումը ևս կարող էր ոչ միանշանակ ազդել ազատագրված անձանց հոգեբանական վիճակի վրա: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ ազատագրված անձանց կարգապահական տույժի ենթարկելու, նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոց կիրառելու օրենսդրությունը նույնպես չի վերանայվել:

Ազատագրված անձանց վիճակի բարելավման նպատակով

Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Վերանայել ազատազրկված անձանց խրախուսանք տրամադրելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ընթացակարգերը համավարակի ժամանակ: Վերանայել ազատազրկված անձանց կարգապահական տույժի ենթարկելու, նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոց կիրառելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ընթացակարգերը: Դիտարկել առավել խիստ կարգապահական տույժի միջոցները կիրառելուց ձեռնպահ մնալու կամ դրանց կիրառման ժամկետները հետաձգելու հարցերը: Նշված առաջարկությունների իրագործումն ազատազրկված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց վիճակի բարելավմանը:

Կալանքից և պատժից ազատման գործընթացը

Ներպետական օրենսդրությամբ նախատեսված են արտակարգ հանգամանքների հիմքով պատժից ազատման վերաբերյալ համապատասխան կարգավորումներ և ընթացակարգեր: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ պատժից ազատման գործընթացում համավարակը չի դիտարկվել որպես արտակարգ հանգամանք: Իսկ կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված լինելը կամ վարակման վտանգը դիտարկվել է ոչ թե որպես պատժից ազատման առանձին հիմք, այլ՝ օրենսդրությամբ նախատեսված մյուս հիմքերի առկայության դեպքում: Ինչ վերաբերում է կալանքին, ապա ներպետական օրենսդրությամբ արտակարգ դրության կամ հանգամանքների հիմքով կալանքից ազատման վերաբերյալ կարգավորումներ կամ ընթացակարգեր նախատեսված չեն: Սակայն մեզ մտահոգում է այն, որ համավարակի ժամանակ կալանքից և պատժից ազատման գործընթացները չեն վերանայվել, այլ գործել են այնպես, ինչպես նախկինում: Բացի այդ, չի մշակվել համավարակի ժամանակ անձանց կալանքից և պատժից ազատման վերաբերյալ մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն օրենսդրությունից բացառություն կազմող այն հիմքերը, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ:

Արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ ազատագրված անձանց՝ կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի լինելու հանգամանքն առանձին վերցված կալանքից կամ պատժից ազատման հիմք չի կարող լինել բացառությամբ այն դեպքերի, եթե խոչընդոտում է կալանքի կամ պատժի կրմանը: Պետության պարտականությունն է ազատագրված անձանց պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրել: Այդ համատեքստում պետությունը կատարում է իր ստանձնած պարտականությունները: Ինչ վերաբերում է այլ երկրներում կալանքից և պատժից ազատման հրատապ միջոցներ ձեռնարկելուն, ապա Արդարադատության նախարարությունը պարզաբանել է, որ դա պայմանավորված է եղել քրեակատարողական հիմնարկների բեռնվածությամբ: Իսկ Հայաստանը ներկայումս պատկանում է ազատագրված ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների թվին, հետևաբար ազատման հրատապ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

Հայտնի է միայն, որ կորոնավիրուսային հիվանդության տարածման սկզբնական ժամանակահատվածում Գլխավոր դատախազության, հանրային պաշտպանների և անհատ փաստաբանների նախաձեռնությամբ կալանավորում տեսակի խափանման միջոցը և ազատագրվում տեսակի պատժատեսակը փոխելու վերաբերյալ միջևորդություններ են ներկայացվել: Այդ գործընթացներում որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խմբեր են դիտարկվել տարեց, ծանր, խրոնիկական կամ մի քանի համակցված հիվանդություններ ունեցող, բժշկական հաստատություններում, այդ թվում՝ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում բժշկական օգնություն ստացող կալանավորված անձինք և դատապարտյալները: Ինչպես տեսնում ենք, կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի համատեքստում որոշակի քայլեր ձեռնարկվել են անձանց կալանքից և պատժից ազատելու պրակտիկան խթանելու համար, սակայն դրանք համակարգված բնույթ չեն կրել: Ավելին, այդ գործընթացներում կանայք չեն դիտարկվել որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ առանձին խոցելի խումբ:

Կանանց ներհատուկ կարիքներն անտեսվել են նաև կալանքից և պատժից ազատվելուց հետո: Քրեակատարողական օրենսգրքով սահմանված են հիմնարկի վարչակազմի պարտականությունները, որոնք վերաբերում են պատժից ազատվող դատապարտյալների աշխատանքը և կենցաղը կարգավորելուն, նրանց օժանդակություն ցուցաբերելուն: Այս դեպքում խնդիրն այն է, որ ազատմանը նախապատրաստելու ընթացակարգեր կալանավորված անձանց

համար նախատեսված չեն: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ թե կալանավորված անձինք, թե դատապարտյալներն ազատվելուց առաջ չեն իրազեկվել համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի և դրանց դիմելու կարգի մասին, քանի որ քրեակատարողական հիմնարկների վարչակազմի համար նման գործառույթ նախատեսված չէ: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկներից ազատված անձանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագիր չի մշակվել: Նրանք համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերում չեն դիտարկվել որպես առանձին շահառու խումբ, այլ կարող էին դիմել և աջակցություն ստանալ՝ այդ ծրագրերում առկա չափորոշիչներին համապատասխանելու դեպքում:

Մեր դիտարկումները փաստում են, որ այս դեպքում ևս կանայք կրկնակի խոցելի վիճակում են հայտնվել, քանի որ մի կողմից առկա է եղել նախկինում ազատագրվածի կարգավիճակ ունենալու հանգամանքով պայմանավորված խտրականության ենթարկվելու, մյուս կողմից՝ բռնության զոհ դառնալու վտանգ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում աճել են ընտանեկան և գենդերային հիմքով բռնության դեպքերը: Նշված գործոնները, զուգորդվելով վերասոցիալականացման ծրագրերի, կացարանի և սոցիալական աջակցության տրամադրման բացակայության հետ, այս խմբի կանանց խոցելի են դարձրել նաև ազատության մեջ:

Համավարակի ժամանակ կանանց կալանքից և պատժից ազատման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Մշակել համավարակի ժամանակ անձանց կալանքից և պատժից ազատման վերաբերյալ մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով օրենսդրությունից բացառություն կազմող այն հիմքերը, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ: Մասնավորապես, քննարկել պատժից ազատման գործընթացում համավարակը՝ որպես արտակարգ հանգամանք, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված լինելը կամ վարակման վտանգը՝ որպես պատժից ազատման առանձին հիմք դիտարկելու հարցը: Արտակարգ դրության կամ հանգամանքների հիմքով կալանքից ազատման վերաբերյալ կարգավորումներ կամ

ընթացակարգեր նախատեսել:

- Կալանքից և պատժից ազատման գործընթացներում որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խումբ դիտարկել կանանց:
- Ազատմանը նախապատրաստելու ընթացակարգեր նախատեսել կալանավորված անձանց համար: Կալանավորված անձանց և դատապարտյալներին ազատվելուց առաջ համավարակի տեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի և դրանց դիմելու կարգի մասին իրազեկման աշխատանքներ կատարելու վերաբերյալ գործառույթ նախատեսել քրեակատարողական հիմնարկների վարչակազմի համար: Քրեակատարողական հիմնարկներից ազատված անձանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագիր մշակել: Նրանց համավարակի տեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերում դիտարկել որպես առանձին շահառու խումբ: Նշված առաջարկությունների իրագործումն ազատագրված կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է համավարակի ժամանակ անուղղակիորեն նպաստել նրանց արդյունավետ ինտեգրմանը հասարակության մեջ:

Խափանման միջոցների և պատիժների կիրառման գործընթացը

Կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի համատեքստում որոշ բայեր ձեռնարկվել են ազատությունից չզրկելու հետ կապված խափանման միջոցների և պատիժների կիրառման պրակտիկան խթանելու ուղղությամբ, սակայն դրանք նույնպես համակարգված բնույթ չեն կրել: Հայտնի է, օրինակ, որ 2020 թվականի ապրիլի 2-ին Արդարադատության նախարարը դիմել է իրավապահ մարմինների ղեկավարներին՝ առաջարկելով հնարավորինս ձեռնպահ մնալ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելուց: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ չի մշակվել մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր, որտեղ սահմանված կլինեն համավարակի ժամանակ կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների և ազատագրված անձանց հանդիսացող պատիժների նշանակման վերաբերյալ այն սկզբունքները, որոնց կիրառման անհրաժեշտությունը

պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ:

Ինչ վերաբերում է Պրոբացիայի ծառայությանը, ապա վերջինս նույնպես իր գործառույթներն իրականացնելիս առաջնորդվել է Կառավարության վերաբերելի որոշումներով և Առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով: Ըստ այդմ, որոշակի ժամկետով դադարեցվել է պրոբացիայի շահառուների ընդունելությունը, իսկ վերահսկողությունն իրականացվել է հեռավար՝ հեռախոսակապի միջոցով: Որոշակի ժամկետով դադարեցվել են նաև պրոբացիայի ծառայողների այցելությունները քրեակատարողական հիմնարկներ: Չեկույց կազմելու նպատակով դատապարտյալների հետ հարցազրույցներն իրականացվել են հեռավար՝ «Skype» ծրագրի միջոցով:

Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 7-ի ցուցման շրջանակներում Պրոբացիայի ծառայության պետին հանձնարարվել է բարձրացնել պրոբացիայի շահառուների և ծառայողների շրջանում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմանն ուղղված քայլերի վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև խիստ հսկողություն սահմանել պրոբացիայի շահառուների և ծառայողների կողմից կորոնավիրուսային հիվանդության կանխարգելմանն ուղղված քայլերի ձեռնարկման նկատմամբ:

Համադրելով մեր ունեցած տեղեկությունները՝ պարզել ենք, որ Պրոբացիայի ծառայության կողմից տուգանք և հանրային աշխատանքներ պատիժների կատարումը կորոնավիրուսային հիվանդության տարածման սկզբնական շրջանում հետաձգվել է՝ հաշվի առնելով շահառուների սոցիալական ծանր վիճակը: Ավելին, ստեղծված իրավիճակը դիտարկվել է որպես մեղմացուցիչ հանգամանք, և Պրոբացիայի ծառայության կողմից պատիժների խստացման վերաբերյալ միջնորդություններ չեն ներկայացվել: Սակայն մեր դիտարկումները փաստում են, որ համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության համար խափանման միջոցների և պատիժների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ համապատասխան ընթացակարգեր չեն մշակվել:

Մեր դիտարկումները փաստում են նաև, որ պրոբացիայի կին շահառուները նույնպես կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումների պատճառով անբարենպաստ վիճակում են հայտնվել: Ստեղծված իրավիճակը հանգեցրել է նրանց գործազրկությանը և սոցիալական վիճակի վատթարացմանը, ինչն իր հերթին խնդիրներ է առաջացրել

պատիժների կրման և առողջապահական ծառայությունների հասանելիության, կենցաղի ապահովման հետ կապված և մի շարք այլ հարցերում: Ստեղծված իրավիճակն անհամաչափ է ազդել նաև նրանց հոգեբանական վիճակի վրա, քանի որ աճել են ընտանիքի անդամների միջև լարվածությունը և կոնֆլիկտները: Սակայն պրոբացիայի կին շահառուների խոցելիությունը նույնպես անտեսվել է և նրանց համար պատժի կրման, վերահսկողության իրականացման և վերասոցիալականացման ծրագրերի մասնակցության այլ ընթացակարգեր չեն մշակվել:

Համավարակի ժամանակ խափանման միջոցների և պատիժների կիրառման գործընթացում կանանց վիճակը բարելավելու նպատակով Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը և Պրոբացիայի ծառայությանն առաջարկում ենք.

- Մշակել մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով համավարակի ժամանակ կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների և ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների նշանակման վերաբերյալ այն սկզբունքները, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ: Այդ գործընթացներում որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խումբ դիտարկել կանանց:
- Պրոբացիայի կին շահառուների համար համավարակի ժամանակ պատժի կրման, վերահսկողության իրականացման և վերասոցիալականացման ծրագրերի մասնակցության այլ ընթացակարգեր մշակել՝ նկատի առնելով նրանց խոցելիությունը:
- Համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության համար խափանման միջոցների և պատիժների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ համապատասխան ընթացակարգեր մշակել: Նշված առաջարկության իրագործումը կանանց համար կարևոր է այնքանով, որ կարող է անուղղակիորեն նպաստել նրանց վիճակի բարելավմանը:

Վիճակագրություն վարելու գործընթացը

Ազատագրված անձանց շրջանում թեստավորման, ՊՇՌ հետազոտության, պատվաստման, վարակվածության, դրական և մահվան դեպքերի վերաբերյալ հաշվառումները կատարել են Քրեակատարողական ծառայությունը և Քրեակատարողական բժշկության կենտրոնը՝ Առողջապահության նախարարի համապատասխան հրամանով սահմանված կարգով: Սակայն այդ տվյալների վերաբերյալ կանոնավոր և պարբերական հրապարակումներ չեն կատարվել: Նշված վիճակագրական տվյալների վերաբերյալ հաշվառում Քրեակատարողական ծառայությունը կատարել է նաև քրեակատարողական ծառայողների և աշխատակիցների շրջանում: Սակայն բուժանձնակազմի շրջանում Քրեակատարողական բժշկության կենտրոնը կանոնավոր վիճակագրություն չի վարել: Ինչ վերաբերում է պրոբացիայի ծառայողներին և շահառուներին, ապա նրանց շրջանում թեստավորումների, ՊՇՌ հետազոտության, վարակվածության, դրական և մահվան դեպքերի վերաբերյալ հաշվառում Պրոբացիայի ծառայությունը չի կատարել, քանի որ այդ գործընթացների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և վիճակագրություն վարելու լիազորություն վերջինիս վերապահված չէ:

Ենթադրելով, քրեակատարողական ծառայության համակարգում առանձնացված հաշվառում կատարվել է, սակայն արագ թեստավորումից բացի մնացած բոլոր գործընթացները կատարվել են առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում՝ Առողջապահության նախարարի համապատասխան հրամաններով սահմանված կարգով: Առողջապահության նախարարության կողմից ըստ խոցելի խմբերի առանձնացված հաշվառումներ կատարելու ընթացակարգեր նախատեսված չեն, հետևաբար քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների, ստորաբաժանումների բուժաշխատողների, ազատագրված անձանց և պրոբացիայի շահառուների շրջանում ՊՇՌ հետազոտության, պատվաստման, վարակվածության, դրական և մահվան դեպքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներառվել են Առողջապահության նախարարության վիճակագրության մեջ՝ ընդհանուր թվով: Այնինչ կարծում ենք, որ առանձնացված և կանոնավոր վիճակագրություն վարելը թույլ կտար պատկերացում կազմել քրեակատարողական և պրոբացիայի համակարգում կորոնավիրուսային հիվանդության ժողովրդագրական պատկերի մասին:

Նույն մտահոգությունը վերաբերում է նաև կորոնավիրուսային

հիվանդության նկատմամբ խոցելի խմբերի ազատագրված անձանց վերաբերյալ տվյալներին: Այդ ուղղությամբ կանոնավոր և պարբերաբար թարմացվող հաշվառում չի կատարվել Զրեակատարողական բժշկության կենտրոնի կողմից: Հետևաբար հնարավոր չէ պատկերացում կազմել այն մասին, թե ազատագրված անձանց տարիքային որ խմբի շրջանում որ հիվանդություններն են առավել տարածված, ինչը հնարավորություն կտար պատշաճ բժշկական հսկողություն կատարել կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման և բուժման գործընթացների նկատմամբ:

Արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ անձանց խոցելիությամբ պայմանավորված կալանքից և պատժից ազատման, ինչպես նաև կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների և ազատագրվածն այլընտրանք հանդիսացող պատիժների կիրառման վերաբերյալ ամփոփ վիճակագրական տվյալներ նույնպես առկա չեն:

Կանոնավոր և պարբերաբար թարմացվող վիճակագրություն չվարելու պատճառով բացակայում են նաև վերը թվարկված գործընթացներում կանանց վերաբերյալ տվյալները, ինչն իր հերթին ընդգծում է այդ գործընթացներում վերջիններիս թվային ներկայացվածությունը, ըստ այդմ՝ քրեակատարողական և պրոբացիայի համակարգում սեռային բաշխմամբ վիճակագրություն վարելու կարևորությունն անտեսելու հետ կապված հիմնախնդիրը:

Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակի դեմ պայքարի համատեքստում կանանց թվային ներկայացվածությունը, ըստ այդմ՝ սեռային բաշխմամբ վիճակագրություն վարելու կարևորությունն ընդգծելու համար Առողջապահության նախարարությանը, Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական բժշկության կենտրոնին, Քրեակատարողական ծառայությանը և Պրոբացիայի ծառայությանն առաջարկում ենք.

- Քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների, ստորաբաժանումների բուժաշխատողների, ազատագրված անձանց և պրոբացիայի շահառուների շրջանում թեստավորման, ՊՇՌ հետազոտության, պատվաստման, վարակվածության, դրական և մահվան դեպքերի վերաբերյալ առանձնացված հաշվառում կատարելու ընթացակարգ ստեղծել:
- Քրեակատարողական հիմնարկներում համավարակի նկատմամբ խոցելի խմբերի ազատագրված անձանց վերաբերյալ հաշվառում

կատարել:

- Արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ անձանց խոցելիությամբ պայմանավորված կալանքից և պատժից ազատման, կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների և ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների կիրառման վերաբերյալ հաշվառում կատարել:
- Վերը թվարկված գործընթացներում առանձնացված հաշվառում կատարել կանանց վերաբերյալ՝ ընդգծելու համար այդ գործընթացներում վերջիններիս թվային ներկայացվածությունը:

Ամփոփում

«Քրեակատարողական և պրոբացիայի համակարգում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանք. քաղաքականության մշակման առաջարկությունը» նմանատիպ փաստաթուղթ մշակելու առաջին փորձն է հայաստանում: Փաստաթղթում շեշտադրվում է, որ քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է.

- *Գենդերազգայուն մոտեցում ցուցաբերել կանանց իրավունքների ապահովմանն ինչպես քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ Պրոբացիայի ծառայությունում:*
- *Նպաստել, որպեսզի առողջապահական և սոցիալ-հոգեբանական ծառայությունները հասանելի և մատչելի լինեն նրանց համար:*
- *Այլընտրանքային խափանման միջոցների և պատիժների կիրառման, ինչպես նաև կալանքից և պատժից ազատման մեխանիզմների կիրառման ժամանակ կարևորել կանանց ներհատուկ կարիքները:*

Նշենք, որ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությամբ նախատեսված էր քրեակատարողական հիմնարկներում արտակարգ իրավիճակներում գործելու պլան մշակել և բարձրացնել քրեակատարողական հիմնարկների դիմակայունության մակարդակն արտակարգ իրավիճակներում, սակայն նշված գործողությունները չեն իրագործվել: Հետևաբար այդ ուղղությամբ համապատասխան գործողությունների իրականացումը ներառվել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2024-2026 թվականների ռազմավարության մեջ: Ըստ այդմ, նախատեսվում է, որ 2025 թվականի 2-րդ կիսամյակում յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ պետք է մշակի արտակարգ իրավիճակների անհատական ծրագրեր:

Կարծում ենք, որ նմանատիպ ծրագիր պետք է մշակվի նաև Պրոբացիայի ծառայության համար: Լիափույս ենք, որ փաստաթուղթն օգտակար կլինի այդ ծրագրերի մշակման հարցում և կնպաստի, որպեսզի կանանց ներհատուկ կարիքները և խոցելիությունը հնարավորինս նկատի առնվեն:

Հիմնական գրականության ցանկ

- «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162406>
- «ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշում, ուժը կորցրել է 2023 թվականի ապրիլի 27-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143139>
- «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145261>
- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 1-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175842>
- Քրեակատարողական օրենսգիրք, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136431>

«Իրավական Նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության առանցքում ազատագրված անձանց իրավունքների պաշտպանությունն է: Այս համատեքստում կազմակերպության կողմից իրականացված ծրագրերն ուղղված են եղել ազատագրված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրների, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացման խոչընդոտների, քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումների, համավարակի պայմաններում պրոբացիայի կին շահառուների և ազատագրված կանանց կարիքների ուսումնասիրությանը:

Իրականացված ծրագրերը միտված են եղել նաև քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների, հոգեբանների և բուժանձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացմանը, ազատագրված անձանց և պրոբացիայի շահառուների տնտեսական հզորացմանը, ստեղծագործական ներուժի զարգացմանը և աշխատանքային հմտությունների բարելավմանը, նրանց նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխությանը:

Կազմակերպությունը զբաղվում է նաև քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության մշակման և ներդրման, ինչպես նաև քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակներին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման ջատագովությամբ:

«Իրավական Նախաձեռնությունների կենտրոն»

հասարակական կազմակերպություն

Կայք՝ <https://prisoninitiatives.am/>

Հեռախոս՝ +374 55 155 300



